

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ.:

Փոփխումը գրվում է և խմբագրությունը և պ. Նատուրեանի խանութում:

Ստամբուղից գրվում են ուղղակի
Ташкент, Редакция «Мшакъ»:

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ 1878 թվից

ԿՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՂ ԵՒ ԼՐԱԳՐԱՆԵՐՆԵՐՆԵՐԻ ՕՐ, բացի տոն և տոներին հետեւեալ օրերից:

Լրագրի դիմաց և պրոգրամման նոյն են մնալու: Մենք կը ստանանք ՍԵՓԵՎԿԱՆ ՀԵՌԵՆԻՐՆԵՐԻ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՍԱՆ մէջ և պ. ԾԱՏՈՒՐԵԱՆՅԻ խանութում:

ԼՈՒՆԱԶԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ կը ծախվին 5 կոպէկով հատուկ: Օտար քաղաքներից պէտք է գիմել հետեւեալ հասցեով՝ ТИФ-ЛИСТ Редакция «Мшакъ»:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Թիւրքիայի հայերի յայտերը:—Ներքին տեսչութիւնը, Նախկին խորհրդից: Նախկին խմբագրին, Ներքին լուրեր:—Արտաքին տեսչութիւնը: Պիտա IX-որդ: Արտաքին լուրեր:—Սառն լուրեր:—«Մշակի» հեռագիրները:—Յայտարարութիւնները:—Տեղեկացոյց:

ԹԻՒՐԻՔԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՅՈՅՏԵՐԸ

Երբ արեւելեան պատերազմը վերջանալու վրա է, երբ պատերազմող երկու կողմերից դադարել են պատերազմական գործերը, ամենքին հետաքրքրում է այն խնդիրը թէ ինչ կը լինի Թիւրքիանակ քրիստոնեաների դրութիւնը:

Պատերազմը արդէն կատարված իրողութիւն է, Ռուսաստանի Թիւրքիայի վրա յաղթող հանդիսանալը նոյնպէս կատարված իրողութիւն է: Թիւրքիանակ քրիստոնեաների դրութեան բարեփոխման կարելութիւնը այնքան կախված չէ լինի կոնֆէրենցիայից, կամ կոնգրէսից, որքան քրիստոնեաների աղաւթութեան համար պատերազմի կատարված իրողութիւնից:

Մեզ հայերիս, ի հարկէ, բացի այն ընդհանուր մարդկային զգացմունքներից, որ իւրաքանչիւրը մեզանից պէտք է ունենայ որպէս մարդ գէպի այնպիսի ազգութիւնների ճնշված դրութիւնը ինչպէս բոլորները, սերբիացիները և այլն, մեզ կրկնում ենք, ի հարկէ ամենքից աւելի պէտք է

հետաքրքրէ մեր համադաւանների և ցեղակիցների, Թիւրքիանակ հայերի վեճակը:

Մեր, ռուսաստանցի հայերիս յոյսը մեր Թիւրքիանակ եղբայրակիցների վեճակի բարեփոխութեան վրա մեծ է, և այդ յոյսը մենք միշտ դնում էինք և միշտ կը դնենք միայն Ռուսաստանի վրա, ինչպէս և յայտնված է եղել մեր այդ զգացմունքը 1876 թվի նոյեմբեր ամսի վերջերում՝ Նորին Կայսերական Բարձրութեան Կովկասեան Փոխարքայի օգոստափառ միջնորդութեամբ Թագաւոր Կայսրին ներկայացրած Թիֆլիսի հայերի ազդէսի մէջ:

Եւ ինչ էին ասում այդ մասին Թիֆլիսի հայերը իրանց ազդէսի մէջ, ահա ինչ էին խնդրում նրանք Լմենաօրըմեա Կայսրից իրանց Թիւրքիանակ եղբայրակիցների համար:

«Քրիստոնէական մարդասիրութեան, խոր ցաւակցութեան, ազգականութեան զգացմունքը գէպի մեր եղբայրները՝ զրդեց մեզ դիմել Ձեր Կայսերական Բարձրութեան օգոստափառ միջնորդութեանը և ամենահաւատարմաբար խնդրել Ձեր Բարձրութիւնը արկանել Թագաւոր Կայսրի ոտնէրին մեր ամենահպատակ խնդիրը պաշտպանել Իր հզօր ձեռքով, հաւասար Թիւրքիայի այլ քրիստոնեաներին, մահաւանդութենից միշտ ճնշված հայոց ազգը, այն միջոցներով, որ նախախնամութիւնը յանձնել է Նորին Մե-

ծութեանը և որ Նա աւելի յարմար կը համարի:»

Եւ այդպէս Նորին Բարձրութիւնը յօժարեց բարեհաճոյ կերպով ընդունել Թիֆլիսի հայերից և ներկայացնել Թագաւոր Կայսրին: Նորին Մեծութիւնը իր կողմից բարեհաճեց շնորհակալութիւն յայտնել Թիֆլիսի հայոց հասարակութեանը:

Եւ յոյսը որ յայտնվեցաւ ազդէսի մաղթանքի մէջ, այդ յոյսը կենդանի է իւրաքանչիւր հայի սրտում՝ այն է որ Ռուսաստանը, Թիւրքիայի քրիստոնեաների այդ միակ պաշտպանը, կը պաշտպանէ և հայերին հաւասար Թիւրքիանակ մնացած քրիստոնեաներին, կը հողայ նրանց մասին հաւասար սլովեաններին:

Մենք հաւատացած ենք որ Թիւրքիայի հայերը մեզ հետ համաձայն կը լինեն, որ նրանց կողմից անդգուլութիւն և անհեռատեսութիւն կը լինէր պահանջել իրանց համար անհարկ և անիրաւոր ըլլալէ բաներ:

Եթէ Սերբիային տրվելու է անկախութիւն, Բոսնիային ինքնավարութիւն, — հայերը պէտք է գոհ լինեն եթէ Հայաստանը կը ստանայ ներքին, կառավարչական նահանգական ինքնավարութիւն:

Մենք ցաւակցելով մեր Թիւրքիանակ եղբայրակիցների թշուառ վեճակին, մեր բոլոր յոյսը նոցա դրութեան բարեփոխման մասին դնում ենք միմիայն Ռուսաստանի վրա, Ռուսաստանի հզօր օգնութեան վրա, և հաւատացած ենք թէ Ռուսաստանը կը հողայ նրանց մասին հաւասար Թիւրքիանակ մնացած քրիստոնեաներին, կը շնորհէ նրանց այն ամենը ինչ որ կը տայ և մնացած քրիստոնեաներին, այսինքն եթէ ուրիշներին կապահովացնէ մարդկային իրաւունքներ, ինքնավարութիւն, քաղաքական կեանք, բաղաւոր տաղաւայ, ինքնավար զարգացում:—նոյնը, մենք հաւատացած ենք, Ռուսաստանը կանէ և Թիւրքիայի հայերի համար: Բայց ի՞նչ չափով Ռուսաստանը կանէ հայերի համար այն, ինչ որ

անում է և անելու է Թիւրքիայի մնացած քրիստոնեաների համար, որքան ընդարձակ ինքնավարութիւն կը շնորհէ նա հայերին համեմատելով այն ինքնավարութեան հետ, որ նա տալիս է միւս քրիստոնեաներին, — այդ մասին մենք թողնում ենք ապագային դատելու և վճռելու, իսկ այստեղ մենք կը բաւականանանք նորից կրկնելով Թիֆլիսի հայերի ազդէսի վերջին խօսքերը, որտեղ նորա ազգայնով Թագաւորին պաշտպանել իրանց եղբայրակիցներին հաւասար Թիւրքիայի մնացած քրիստոնեաներին, հաւատացած էին որ Թագաւոր Կայսրը, լսելով նրանց մաղթանքները, կը պաշտպանէ թշուառներին «այն միջոցներով, որ նախախնամութիւնը յանձնել է Նորին Մեծութեանը և որ Նա աւելի յարմար կը համարի:»

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽԱՐԱՎՈՂԻՑ

Փետրվարի 4-ին

Յունվարի 17-ին խորհովի համալսարանի 73-դ տարեդարձ էր, Առաւօտեան համալսարանական սուրբ Անտոնիոս եկեղեցում պատարագ աւարտելուց յետոյ աստուածաբանութեան պրոֆեսոր ասաց մէկ ազգու քարոզ լուսաւորութեան վերաբերութեամբ:

Տարեկան տարեդարձը կատարելու հանդէսը նշանակած էր խորհովի Անտոնաբուժական ճեմարանի մեծ դպրիւնում, պատճառ որ համալսարանի դպրիւնը նոյն միջոցին լի էր Վարմիր խաչի ընկերութեան յանձնած դիմադրական հիւանդներով և վիրաւորվածներով: Ճեմարանի դպրիւնը բաւականին լայն և ընդարձակ է, պատերը դարդարած մեծ և գեղեցիկ պատկերներով: Գալիլէի մէկ կողմի մէջ տեղը ամբիօն էր պատրաստած որ նոյնպէս դարդարած էր ծառերով և ծաղիկներով: Ամբիօնի շուրջը շարած էին բաղկաթոռներ, որոնց վրա նստած էին դաւառապետը, խորհովի նահանգի ուսումնարանների հոգաբարձուն (Почетный уездного учителя), իսկտօրն համալսարանի, պրոֆեսորները և այլ նշանաւոր մարդիկ, բաղկաթոռների ետեւ շարած էին բաւական չափ ամբիօններ որտեղ նստած էին զանազան տեսակ և կարգի մարդիկ՝ օրիորդներ, ուսանողներ և այլն: Նրբ բոլորեքանք ժողովվեցան՝ ժամի 1-ին երաժիշտները սկսեցին անել «Տէր կեցո՛ղ զմեր Արքայ» (Боже Царя храни), որի ժամանակ բոլորեքանք ոտի կանգնեցան: Այս հիմն (гимн) վերջնապէս յետոյ ամբիօնի վրա ներկայացաւ կենդանաբանութեան պրոֆեսոր պ. Ստեպանով և կարգաց. «Համալսարանի դրութիւնը և 1877 տարվայ հաշիւը»: Յիշեց թէ որքան ամբիօն կար և կայ պարագ ամենֆալուրտեաներում, թէ որքան հոգի պատրաստվեցան պրոֆեսորութեան պաշտօնը ստանալու, քանի հոգի արժանացան պրիւլատ-դոցէնտի աստիճանին և այլն: Նմանապէս կարգաց որ առ այսմ, այս 1878 տարվայ յունվարի 1-ից համալսարանի

ուսանողների թիւը է 569, Անսանդուրական ճեմարանի ուսանողների թիւը, որը լուսմ են բժշկական ֆակուլտետում կարգացած առարկաների մեծ մասը բժշկական ուսանողների հետ ի միասին—196, աղատ լուսողների թիւը—35, դեղագործի օգնականներին—14 և անասնաբույժի օգնականներին—3: Ուսանողները ուսումնական կողմանէ բաժանված են այսպէս՝ պատմական և ֆիլոսոփական ֆակուլտետում 61 հոգի, ֆիզիքական և մատենադրական—90 հոգի, իրաւաբանական 115 և բժշկական 303 հոգի: Արժանացան պարգևի—համալսարանական մեղադիր, 5 ուսանողներ ի թիւս որոց և մի ֆիլիսոփայի պոլիւսի Մ. Սթեփանովի: Հաշիւը կարգաւորը յետոյ երաժիշտներն անցան «Жизнь за Царя» օպերայից մի կտոր, որի վերջանալուց յետոյ ամբիօնի վրա ներկայացաւ պրոֆեսորն քաղաքական տնտեսութեան և կարգաց մէկ ճառ կամ լաւ ևս ասել յօդուած ներկայ Ռուսաստանի երկաթուղիների վատ դրութեան մասին: Երբ պրոֆեսորն աւարտեց իր ճառը ծափահարեցին նրան: Երաժիշտներն դարձեալ սկսեցին անել «Տէր կեցք զմեր Արքայ» որի աւարտելուց յետոյ բաժանեցին պարգևները արժանաւոր ուսանողներին և այսպէսով վերջացաւ տարեդարձի հանդէսը:

Նոյն օր երեկոյան նշանակած էր տեղիս առեւտրական կոլեում պարահանդէս յօդուած չքաւոր ուսանողներին: Բազմութիւն շատ կար այդ երեկոյին և բաւականին ուրախ և զուարթ անցաւ երեկոն, բոլորեքեանք ևս զո՞ք մնացին: Մինչև առաւօտեան ժամի 2, 3 և աւելի ևս դեռ մատաղահաս զոյգերը պարում էին առանց յոգնելու: Այս երեկոյի մուտքը եղաւ 809 ր. 80 կօպ., իսկ ծախսը 207 ր. 50 կօպ., ուրեմն զուտ զուտ մնաց յօդուած չքաւոր ուսանողների 602 ր. 30 կօպ., որ և հասուցին ուր հարկն էր:

Երկրորդ օրը բացվեցաւ Նիկոլայոսեան հրապարակի վրա ուսանողների համար սեզանատուն (Сезанован) որտեղ ուսանողները կարող են ունենալ բաւականին լաւ պատրաստած ճաշ երկու տեսակ կերակուրից՝ ամսական 6 րուրդ վճարելով, իսկ խեղճ ուսանողները աւելի ևս պակաս վարձով, կամ ձրի, Այլոց համար նոյն ճաշի գինն է 8 րուրդ: Ցանկանում ենք ի բոլոր սրտէ այս նոր բացված բարի հպատակներով սեզանատան կատարեալ յաջողութիւն և մշտական զուարթութիւն:

Նոյն յունվարի 17-ին խարիօլի՝ համալսարանի տարեդաձի օրը Եկատերինոսլավ քաղաքում ևս կար պարահանդէս յօդուած այտուղի համալսարանի չքաւոր ուսանողներին: Քորտեղ ժողովածի գումարը եղել է մինչև 500 րուրդ:

Այստեղ ամբողջ տարվայ միջոցում վնում է չորս տօնավաճառ 1) Ջրօհնայ (Крепченская), 2) Հոգեգալսեան կամ ամենատաւրը Երրորդութեան տօնի (Троицкая), 3) Արաբիական (Успенская) և Սրբոյ Աստուածածնայ պաշտպանութեան (Покровская) բայց սրանցից ամենամեծն է Ջրօհնայէ: Խարիօլի Ջրօհնայից անտանոված տօնավաճառը սկսվեց յունվարի 6-ին և շարունակվեց մինչև ամսիս վերջին օրերը: Տօնավաճառի մօտենալը երեւում էր դեռ ևս գեղատեսիլի վերջերին ամիս 25-ից սկսած, երբ մեծ հրապարակների վրա սկսեցին տախտակայ խախտութիւն չինել, մեծամեծ տօնավաճառական շինութիւններում մինչև այն օրը կողպած կրպակները բանալ, երկաթեղու կայարանից ապրանքներ բերել և լցնել կրպակները և ամբարները, մի քանի հրապարակների վրա վրաններ փռել, հազար տեսակ յայտարարութիւններ, աֆիշաներ դուրս տալ և այլն և այլն: Իսկ յունվարի 6-ից քաղաքը բոլորովին ողորկեցաւ և լցվեցաւ այնքան օտարաբաղադրացիներով՝ որ մեծ վաճառատունների կրպակների կից ճանապարհները վրա դժուարութեամբ կարելի էր անցնել թէ՛ օտով և թէ՛ կառավոր: Այս միջոցին գլմեցին խարիօլ և ձեռնածոները, գաղանդաւ փակարանները (звѣринцы), թանգարանները (музеумъ), ամենացոյցները (панорама), նշանաւոր երգիչները և այլն: Բացի սրանից կան այստեղ և երկու ուսուցիչ թատրոն, Գօգֆորայի ցիրիք՝ որտեղ ամեն օր տալիս են ներկայացումներ, առեւտրական և անտանական կլոբներ՝ որտեղ տալիս են կօնցէրտներ, պարահանդէսներ և մասկարադներ: Մէկ խօսքով տեղիս ժողովուրդի և օտարաբաղադրացիների համար այս միջոցին այնքան շատացաւ զուարճութիւնների թիւը՝ որ շատ անգամ չը գիտեն թէ երեկոյան ցրտեղ անցնեն իրանց ժամանակը և սկսում են մտածել և ընտրել, բայց մեծ մասը Օսման-փաշայի հրապարակական տեղերից որտեղ լինելը խմանալու պէս,

խելոյն վճում են դիմել այնտեղ: Աճառականները առհասարակ այս տօնավաճառին իրանց գործերը շատ աւելի լաւ առաջ տարան քան թէ անցնալ տարին: Ի հարկէ աւելորդ է յիշել այս միջոցին հիւրանոցների մասին, որոնց տէրերը ևս մեծ օգուտ քաղեցին տօնավաճառի ժամանակ: Այստեղ առ այժմ ներքոյ յիշեալ առարկաների գները հետեւեալն են:

Շաքար բաֆինաղ (մաքրած) խարիօլի գործարանի, պուրը 6 րուրդ: Շաքար բաֆինաղ Բօրինսկու գործարանի (Заводъ) պուրը 6 ր. 10 կ., Շաքար բաֆինաղ խարիտօնենսկոյ գործարանի պուրը 5 ր. 90 կ., Շաքար բաֆինաղ Բօրինսկու գործարանի պուրը 5 ր. 90 կ., Շաքարաւաղ խարիօլի պուրը 4 ր. 80 կ., Շաքարաւաղ Կիէլի պուրը 4 ր. 60 կ., ձէթը (масло деревинное) պուրը 14 ր., Փօտօգէնը (керасинъ) պուրը 2 ր., բուրդը չը լուացած պուրը 9 ր. 50 կ., բուրդը լուացած պուրը 26 ր., բուրդը պերեգօն (перегонъ) անուանված պուրը 14 ր., ալիւրն ցորենի՝ առաջին տեսակը պուրը 2 ր. 80 կ., երկրորդ տեսակը պուրը 1 ր. 80 կ., երրորդ տեսակը պուրը 1 ր. 40 կ., ալիւրն հաճարի (ржаная) պուրը 60 կ., մումը բնածարպի (стеаринъ) պուրը 12 ր., մումը ճրագովի պուրը 6 ր., կօֆէն Մօկկայի պուրը 22 ր., կօֆէն Լիվանի պուրը 18 ր., կօֆէն Մարտինի պուրը 18 ր., Կարագը պուրը 12 ր., եղը աղ արած պուրը 7 ր., բրինձը պուրը 4 ր., ձուռն 100 հատը 1 ր. 50 կ., փայտը կաղնեայ (дубовъ) սաժէն 30 րուրդ:

Ա. Մեղրուկանց

ՆԱՄԱԿ ԽԱՐԱԳՐԻՆ

Թիֆլիս փետրվարի 10

«Մշակի» № 20 դժի տակ դետեղած էր պ. Մ. Միսնարեանի «Մի նկատողութիւն» Մայրենի լեզուի ա. տարվայ զրգովի մասի վերաբերութեամբ: Պ. Միսնարեանը, որչափ մենք հասկացանք, գլխաւորապէս վշտացած է մեղանից նրանով, որ մենք մեր գրքի զրգովի մասը կաղմկելիս հետեւել ենք նրա վայելուչ գրութեան օրինակներին, առանց հասարակութեանը այդ մասին յայտնելու: Նկատողութեան այդ կէտի վերաբերութեամբ մենք բոլորովին իրաւացի ենք համարում պ. Միսնարեանի արտունջը, միայն ցաւում ենք, որ նա սեփականացնում է մեզ մի յատկութիւն «Իւրացնել ուրիշ աշխատութեան պատիւը», որը մենք մեր մտքով անգլիացի անցկացրել: Թէ ինչ կարծիքի ենք եղել մենք պ. Միսնարեանի վայելուչ գրութեան օրինակների մասին և որպիսի վստահութեամբ առաջարկում ենք և ցանկանում, որ նա մի օր առաջ ընդունված և ընդհանրացած վնի մեր բոլոր ուսումնաւարաններում, այդ ընթերցողը և նոյն իսկ պ. Միսնարեանը անձամբ կարող է ստուգել, կարգաւոր մեր ուսուցիչների համար կազմած բացատրական ձեռնարկի այն զուրկը, որ գրութեան է նուիրած: Ցաւում ենք միայն, որ այս ձեռնարկը իր ժամանակ չը դուրս եկաւ և չորս թերթից բաղկացած գրքից մեզինք բոլորովին անկայն պատճառներով ամբողջ չորս ամիս տեղադրվում էր !! Եթէ մեր գրքից իր ժամանակ դուրս դար, գուցէ պ. Միսնարեանը մեղքը չունենար այդպիսի մի արտա վերաբերել մեզ: Ինչ վերաբերում է այն նկատողութեանը, որ վայելուչ գրութեան օրինակները, ինչպէս նրանք գետեղված են մեր գրքում, կարող են միայն գրածը կարգաւ սովորեցնել և ոչ վայելուչ գրել ապա մենք պէտք է ասենք, որ մեր նպատակն էլ զլխաւորապէս այն է եղել, որ մանուկները կարգան ոչ միայն տղածը, այլ և գրածը: Բայց թէ ինչպէս պէտք է գրեն, ինչից պէտք է սկսեն, որպիսի բաղադրող տարրերից պէտք է կազմեն իւրաքանչիւր տառ, այդ ուսուցչի գործն է և ոչ ընթերցարանի: Հայոց լեզուի ուսուցչին եթէ նա մի և նոյն ժամանակ և գրութեան ուսուցիչ չէ, այդ գործում այնքան պէտք է խառնուի, որքան դա վերաբերում է իր արհեստին—կարող գրել կապակից առաջ տանկուռ, այնուհետեւ տավրեղացած տառերը յանձնում է գրութեան ուսուցչին գրել տալու և վարժեցնելու, ինքը բաւականանալով միմայն նրանով, որ մանուկները կարգում են գրածը և գրում են արդէն սովորած տառերը: Իսկ թէ գրութեան ուսուցչին ինչ սխառեմայով կը տանէ գործը, ինչից կը սկսէ և ինչով կը վերջացնէ, այդ ընթերցարանական դասակարգը չէ կարող առաջարկել, — դա վայելուչ գրութեան մեծօղիկայի գործն է:

Մենք մեր ուսուցիչների համար կազմած գրքում գրութեան մասին խօսել ենք այնքան, որքան նա կաղ ունի կարող և գրել զուգընթաց առաջ տանելու արհեստի հետ:

Ն. Տէր-Վանդեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս տարի «Մշակը» ամենից շատ բաժանորդ ունի ԲԱՅՈՒԻ մէջ: Այդ քաղաքում մեր բաժանորդների թիւը 56 է, որ առաջ երբեք չէ եղած և որ համեմատելով Թիֆլիսի հետ մեծ թիւն է:

Յիշեցնում ենք մեր ընթերցողներին որ օրվոյ Անդրէկոսկու գործը քննվելու է ԹԻՖԼԻՍԻ նահանգական դատարանում փետրվարի 27-ին:

ՄՕՁԳՕԿԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ տարագրութեամբ հաւաքել են 2500 ր. կւււր բայց անելու դիտաւորութեամբ Տեղայից անհամբերութեամբ սպասում են կառավարութեան թոյլտուութեանը, իսկ մի վաճառական բերել է տուել աշակերտ քանակութեամբ խաղալու թուղթ:

Յունվարից դրուէ նոյն նամակագիր «ՄՕՁԳՕԿԻՑ» ունի մի ընթերցարան, Հայերէն գրեթէ բոլորովին չեն կարդում մեզ մօտ: Օտար լրագիրներ կարգաւ պատեղ մօզա է:

ՄՕՁԳՕԿԻՑ հաղորդում են մեզ հետեւեալ: Այստեղ մթերքները թանկ են, մանաւանդ այն ապրանքները, որոնք Թիֆլիսից են գալիս: Փայտի սայլը առաջ արժէր 1 ր. 50 կ., այժմ արժէ 3—4 ր.: Հայի գինը սովորականն է: Բրօզկու շաքարի պուրը առաջին տեսակը արժէ 8 ր. 40 կ., զարին և խոտը կրկնապատիկ գներով են ծախվում: Միւսը մինչև այժմ արժէր ֆունտը 5 կ., այժմ 7 կ. է: Այս գները Մօզգօի համար շատ բարձր են:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՊԻՈՍ IX

(Շարունակութիւն և վերջ)

Պիոս IX մի քանի անգամ մինիստրները փոխելուց յետոյ, կառավարութեան գործերը յանձնեց Հռոմում Ֆրանսիական նախկին դեսպան Պէլլերինօ Բօսին որ երազում էր պարլամենտական կառավարութիւն հաստատել բուրժուաների օգնութեամբ: Բօսի թէ յետադիմական և թէ յեղափոխական կուսակցութիւններին ատեղի եղած, սպանվեցաւ 1848-ի նոյեմբերի 15-ին: Կառավարութիւնը ամենեւին չաշխատեց մարդասպանը գտնել: Պիոս IX բոլորովին հոգ չարաւ այդ սպանութեան համբար լսած ժամանակ և անմիջապէս մի նոր մինիստրութիւն կազմեց ժողովրդի հակառակ մարդկութանցից: Հետեւեալ օրը յեղափոխութիւն ծագեց Հռոմում: Ժողովրդից պատգամաւորութիւններ ներկայացան Վիլլերմալի պալատը, որոնք պահանջում էին մինիստրութեան հրաժարվել: Պապը արհամարհեց նրանց, ժողովուրդը յուսահատված, արկւնահեղ կռիւներ եղան Յիսուս Քրիստոսի փոխանորդ ա. պապի պահանջան դրքերի և ժողովրդի մէջ: Պապը որոշեց փախչել և նոյեմբերի 25-ին, արքայի կերպարան մտած, աւստրիական զործակաւորի կնոջ Տիկին դը Սպօրի հետ անվտանգ անցկացաւ սահմանադրից և գնաց Վոյեյտ, նապօղի թագաւորի պաշտպանութիւնը խնդրելու: Թէպէտ պապի անձը վտանգի չէր ենթարկվել Հռոմում, բայց սրանից մի առիթ գտաւ նա մարտիրոսութեան պատկին արժանի ցոյց տալ իրան և կողմնակիցներ որոնել:

Այդ ժամանակ Հռոմի սահմանադրական ժողովը որը ընտրված էր 1847-ի փետրվարի 6-ին, հրատարակեց պապին զրկված իր վահագնական իրաւունքներից, մի և նոյն ժամանակ ազատ թողնելով նրան իր հոգեւոր իշխանութեան բացարձակ գործադրութիւնը:

Իսկ պապը որ մի տարուց առաջ աւստրիացիների դէմ պատերազմել չուզած ժամանակ ասել էր թէ ինքը Քրիստոսի փոխանորդ լինելով երբեք պատերազմ չէ անի իր որդիների դէմ, օտար տէրութիւններից խնդրեց որ զան սպանեն իր ժողովրդին, իր թագաւորական տիպոսը պահպանելու համար:

Աւստրիացիները տիրեցին Ագրիական Տօվեղեայ տեղերը: Իսկ Լուի Բօնապարտ որ այն ժամանակ Ֆրանսիայի հանրապետութեան նախագահն էր և մտածում էր դեկաւ, 2-ի պետական հարվածով դաւաճանել հանրապետութեան և կայսր լինել, իրան շահաւոր համարեց պապի բացարձակ իշխանութեան օգնել և այդ կերպով իր կողմն ունենալ մի կամ երկու միլիօնի չափ կաթօլիկների ձայնը: Հռոմը Գարիբալդիի հրամանատարութեամբ հերոսական կռուով դիմադրեց Ֆրանսիական բանակին, բայց վերջապէս երկար պաշարուովից և մի քանի օրվայ ուժակոծութեանց յետոյ գնեցեալ Աւգիւստ մօտ: Հռոմ, յալիս 5-ին:

Երբ Պիոս Ֆրանսիական սուլիների շնորհով վերադառնալու եղաւ Հռոմին, նշանաւոր յետադիմականներից մի նոր մինիստրութիւն կազմեց և բանտերը կրկին լքեցվեցան Հռոմայի հայրենասէրներով: Թէպէտ Լուի Բօնապարտը խնդրեց որ ներողութիւն շնորհէ և Պիոս էլ խոստացաւ և մի նոր կոնգակով էլ յայտնեց թէ նոր բարեկարգութիւններ կան, բայց ինչպէս ամեն ժամանակ, այս անգամ էլ չը գործադրվեցան խոստումները: Վերջապէս երբ մի տարի կամաւոր պատերից յետոյ Պիոս IX որոշեց վերադառնալ Հռոմ (1850-ի ապրիլի 12-ին), պետական ստաժին մինիստր և քարտուղար ընտրեց իր ծանօթների մէջ ամենից աւելի յետադիմական, իր ժամանակի քաղաքագէտ մարդկերանց մէջ ամենից աւելի խորամանկ կարգիւնալ Անտօնէլուն որը 1818—49-ին որչափ դեմօկրատական եռանդ էր ցոյց տուել, այժմ էլ նոյնչափ ատելութիւն էր ցոյց տալի որ և իցէ ապստոլութեան դէմ: Թշուառ Հռոմը այս ծանր լուծի տակ ճնշվեցաւ վերին աստիճանի սարկութեան և անկարգութեան մէջ, Ֆրանսիայի հանրապետութեան նախագահ Լուի Բօնապարտի և յետոյ կայսր հրատարակված Նապօլէօն III-ի շնորհով:

1857-ի պատահարներից յետոյ պապի իշխանութեան ներքեւ եղած նահանգներից մի քանիսը գրեթէ միաձայնութեամբ մտան Սարդինիայի իշխանութեան ներքեւ: Այս անգամ Նապօլէօն III-ը գէշեցով չօգնեց պապին և խորհուրդ տուեց նրան լռել այդ կատարված եղելութեան (fait accompli) առջև: Պապը կոնգակներ ուղարկեց եպիսկոպոսներին, պատուիրելով որ գրգռեն հաւատացեալներին դիմաւորելու և պաշտպանել պապի երկիրները իրանից ապստամբված ժողովրդի դէմ: Ամեն կողմից կամաւոր զօրքեր գրվեցան և Ս. պապի համար մի բանակ կազմվեցաւ: 1860 թւի ապրիլ ամսում, Ֆրանսիացի զենեւալ Լամօրիսիէր յանձն առաւ այդ խաչակրների զօրքանակի ընդհանուր հրամանատարութիւնը: Իսկ ժողովրդին առաջնորդում էր գնեցեալ Գարիբալդի և խառնական զօրքերին գնեցեալ Չիպրիանի և Ֆանտի: Երբ առաջին անգամ արձակվեցան թուրանութիւնը, պապական բանակը ցրվեցաւ և գնեցեալ Լամօրիսիէր փախաւ Անկօնա: Այս պատերազմում պապը կորցրեց իր նահանգներից մի քանիսն էլ: Բացի Հռոմից Չիպրիան-Վէլիայի և նրա կից եղող տեղերին ուր Ֆրանսիայի զօրքեր չը կային, տիրեցին իտալացիները և ժողովուրդները միաձայնութեամբ կամեցան մանել Վիկտոր-Էմանուէլ թագաւորի իշխանութեան տակ: Պիոս IX այդ առիթով մի խիստ ճառ խօսեց որի մէջ զիջում էր Նապօլէօն III-ին անգամ և որը վերջանում էր այս խօսքերով: «Այժմ մեզ դժուար է գիտենալ որ բաւականներից պաշտպանված ենք թէ թշնամիներից բանաւորված: Պետութեւ շղթայակապ է:

